**311. ԲԱԿՈՒՄ,** *անտեսական մեծ շենքի պատի միջ ագուցված մի քարի վրա (շենքը եկեղեցու հարավումն է), 4 տող.*



ԵՍ ԿԱԲՐԻԷԼՍ ԿՐԵՑԻ. :ՌՃԴԴ: (1745) Թ·Վ.ԻՆ, ՈՐ ՆԱՏԻՐ ՇԱՀՆ ԱՄԱՆ[Ա]ԿԱԻՆ ԳՆԱՑ:

Ծանոթ. *Հավանաբար գրչի սխալմունք է. «ամանակաւն» դուցե «ժամանակաւն» (խմբ.),*

Լուսանկ 79.

**312. ԲԱԿՈՒՄ,** *տնտեսական շենքի անկյունաքարի վրա, փակագիր 2 տող.*



Ծանոթ. *Երկրորդ տողում հավանաբար ԴԱՒԻԹ անունն է։*

Լուսանկ. 80

## 22. ԴԱՍՏԱԳԻՐ—ԴԱՍՏԱԳՑՈՒԼ—ԴԱՍՏԱԿԵՐՏ

*Այս գյուղում եղել է եկեղեցի, որն ունեցել է նաև գավիթ, իսկ շրջապատում՝ գերեզմանատուն։ Բարխուդարյանցի այցելած ժամանակ շենքերի միայն պատերն են կանգուն եղել, այժմ դրանք էլ չկան։ Շենքերի քարերը և տապանաքարերը գյուղացիք օգտագործել են իրենց տների պատերի մեջ, ուր և մենք տեսանք երկու խաչքարերի մասեր՝ արձանագրությունների մնացորդներով։ Մյուս արձանագրություններն առնում ենք Բարխուդարյանցից։*

*Կաղանկատվացին գյուղը հիշատակում է Դաստակերտ անունով*[1]*։*

**313. ԽԱՉՔԱՐԻ** *մաս, դրված մի տան ղատուհանի կողին, վրան 3 տող.*



. . . ԿԱՆԳՆԵՑԻ Խ[Ա]ՉՍ[Խ]ԱԹՈՒՆԱ. ԵՒ ՄԱ[Ս]ԽԱԹՈՒՆԱ:

Ծանոթ. *Այս և հաջորդ արձանագրությունը միացված են Բարխուդարյանցի մոտ, բայց դրանք տարբեր են։*

*Հրատ. Բարխուդարեանց, 233։*

**314. ԽԱՉՔԱՐԻ** *մաս, դրված մի այլ տան պատի մեջ, վրան 4 տող.*



:Չ[Ժ]Բ: (1263) ԷՐ Թ[Ի]Վ.Ն[Ի] ԵՍ ՄՈՍԷՍ ԷՐԷՑ, ՈՐ ԿԱ[Ն]ԳՆԵՑԻ ՍԲ. ՆՇԱՆ[Ս] . . . . . :

Ծանոթ. *Հարյուրավորը հավանաբար ենք վերականգնում։ Տե՛ս նախորդի ծանոթությունը։*

**315. ԵԿԵՂԵՑՈՒ** *հարավային ավանդատան ճակատին եղել է.*

Թւ. :ՉԻԵ: (1276), ի թագաւորութեան Ապաղէին, յամի տէրութեան Լեւոնի. ի հայրապետութեան տէր Ստեփանոսի. ես տէր Սուքիասեանց ցեղէն տէր Ներսէս հիմնադրի տկար ոգով շինեցի զեկեղեցիս յիշատակ մեզ և մերոց. յիշեցէք ի Քրիստոս, աղաչեմ:

*Հրատ. Բարխուդարեանց, 233։*

---

[1] Մ. Կաղանկատուացի, 380։

*316. ԵԿԵՂԵՑՈՒ մուտքի բարավորի վրա եղել է.*

Կամաւն Աստուծոյ. ի դատաւորութեան Արղունին, ի հայրապետութեանն տէր Ստեփաննոսի, ի տէրութեան Իւանէին և Սադրադինին որդոյ Փախրադինին, ես տէր Սարգիս շինեցի զժամատունս, զուգեցի զգաւազանս, զաւետարանս . . .

Ծանոթ. *Կասկածելի են «ի դատաւորութեան» ձուցե (ի թագաւորութեան) և այլ մի շարք անձնանուններ (խմբ.)։*

Հրատ. *Բարխուդարեանց, 233։*

## 23. ՏՈՆԱՇԵՆ ԳՅՈՒՂ

*Այս գյուղում շինված միակ հուշարձան եկեղեցին ես այժմ գոյություն չունի։ Գյուղի սահմաններում, որը խիտ անտառապատ է, գտնվում են մի քանի հին գյուղատեղեր, ուր միայն եկեղեցիների ավերակներն են երևում թփուտների միջից և մի քանի խաչքարերի բեկորներ։*

*317. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ ԵԿԵՂԵՑՈՒ բարավորի վրա եղել է՝*

Ծառայ Աստուծոյ ես Մելիքսէթս նորոգեցի ժամատունս յիշատակ.

Ծանոթ. *Եկեղեցին այժմ գոյություն չունի։*

Հրատ. *Բարխուդարեանց, 231։*

*318. ԽԱՉՔԱՐ, պարզ սալքարից, գտնվում է «Ամառվա եղցի» եկեղեցու բակում, վրան 6 տող.*

Ի Թ | ՆԶ
ԵՍՏՐ | ՆԵՐՍԷՍ
ԿԱՆԳ | ԵՑԻԶ
ԽԱՉՍ | ՏՐ
ԱՆԴՐԻ
ԱՍԻՆ

Ի Թ[Վ] :ՉԶ: (1257). |ԵՍ ՏՐ |ՆԵՐՍԷՍ| ԿԱՆԳ[Ն]ԵՑԻ Զ|ԽԱՉՍ ՏՐ ԱՆԴՐԻԱՍԻՆ:

*319. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, գտնվում է «Փոքր Թթուտ» գյուղատեղում. երեսին 4 տող.*

ԱՅՍ ԷՀԱՆԳ
ԻՍՏՍՄՊԱՏ
ԱՅԱՂԱԻԹՔ
ՅԻՇԵՑԷՔ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՍՄՊԱՏ|Ա. ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

*320. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նեղ ու երկար, նախորդի մոտ. վրան թերի 2 տող.*

· · · ԻՆՌՃԻ · · · · · ·
· · ՐՍՊԱՆԱԻԿԻՍԱԻՐ · ·

[Ի] ԹՎ[ԻՆ] :ՌՃԻ: (1671) · · · ·
· · ՈՐ ՍՊԱՆԱՒ ԿԻՍԱԻՐԵԱ · ·